ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՍՍՌՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՆԻԿԻՏԱ ՍԵՐԳԵՅԵՎԻՉ ԽՐՈՒՇՉՈՎԻՆ՝ ԱՐԵՎԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՄՈԼՈՐԱԿԻ ԱՐՁԱԿՄԱՆ ԱՌԹԻՎ

ՍՍՌՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՆԻԿԻՏԱ ՍԵՐԳԵՅԵՎԻՉ ԽՐՈՒՇՉՈՎԻՆ

ՄՈՍԿՎԱ

Խոր հիացումով ողջունում ենք սովետական գիտության նորագույն մեծ հաղթանակը, որով արեգակնային համակարգը օժտվեց արհեստական մի նոր մոլորակով:

Պատմական այս սքանչելի նվաճման առթիվ, թույլ տվեք սրտագին շնորհավորանք ուղղել Ձերդ Գերազանցության և մոլորակի հեղինակ գիտնականներին ու կառուցողներին:

Սովետական գիտության այս մեծ հաղթանակը Մենք նկատում ենք նաև փառավոր հաղթանակը՝ գիտությունը մարդկության բարօրության և աշխարհի խաղաղության ծառայեցնելու վեհ գաղափարին:

Ի սրտե մաղթում ենք մեր հայրենի գիտության նորանոր հաջողություններ՝ ի փառս սովետական հանճարի և ի բարօրություն և հերջանկություն համայն մարդկության:

Հարգանք և օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ